ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿՄՀՔ-ՄԱԾՁԲ-25/42

ք. Հրազդան «17» ապրիլ 2025թ.

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ ԱԴՎՈԿԱՏ» ՍՊ ընկերությունը , ի դեմս Ընկերության տնօրեն Լ.Թարջիմանյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը ստանձնում է փաստաբանական ծառայությունների մատուցման պարտավորությունը, (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է

980 000 /ինը հարյուր ութսուն հազար/ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հրազդանի համայնքապետարան ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք Սահմանդրության հրապարակ 1 Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001465 ՀՎՀՀ 03027114 Համայնքի ղեկավար՝	«ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ ԱԴՎՈԿԱՏ» ՍՊԸ Ք.Հրազդան, Վարչական շենք «Ակբա Բանկ» ԲԲԸ Հ/Հ 220343335141000 ՀՎՀՀ 03034814 Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝
_____Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	_____ Լ.ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ

Հավելված 1
<<17 >> ապրիլ 2025թ. կնքված
N ԿՄՀՔ-ՍԱԾՁԲ-25/42 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
1. Գնման առարկա է հանդիսանում Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար փաստաբանական ծառայությունների ձեռքբերումը: 2. Ծառայության մատուցման պայմաններն են՝ ա) Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, Կատարողի կողմից անձամբ, ինչպես նաև երրորդ անձանց միջոցով: բ)Բանավոր խորհրդատվություն, իրականացնում է դատական ներկայացուցչություն և Պատվիրատուի կողմից տրված լիազորությունների շրջանակում ներկայացնում է նրա շահերը՝ դատական մարմիններում որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ, կազմելով և ներկայացնելով համապատասխան դիմումներ, հայցադիմումներ, առարկություններ, պատասխաններ, միջնորդություններ, վերաքննիչ բողոք կամ պատասխաններ, վճռաբեկ բողոք կամ պատասխաններ, իրականացնելով իրավիճակից թելադրող և Պատվիրատուի օրինական շահերի պաշտպանությանն ուղղված այլ գործողություններ, գ) հանդես է գալիս ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում որպես Հրազդանի համայնքապետարանի որպես պահանջատիրոջ կամ պարտապանի ներկայացուցիչ: 3. Գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագիրը գործելու է պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025թ.:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագրի կնքման օրվանից սկսած	25.12.2025թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Սահմանդրության հրապարակ 1
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114
Համայնքի ղեկավար՝

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ ԱԴՎՈԿԱՏ» ՍՊԸ
Ք.Հրազդան, Վարչական շենք
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220343335141000
ՀՎՀՀ 03034814
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝

----------Լ.ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ

Հավելված 2
«17» ապրիլ 2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ՄԱԾՁԲ-25/42»գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79141100	Փաստաբանական ծառայություն				80000	192500	305000	417500	530000	642500	755000	867500	980000	980000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Սահմանդրության հրապարակ 1
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114
Համայնքի ղեկավար՝

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ ԱԴՎՈԿԱՏ» ՍՊԸ
Ք.Հրազդան, Վարչական շենք
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220343335141000
ՀՎՀՀ 03034814
Սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն՝

----------Լ.ԹԱՐՋԻՄԱՆՅԱՆ